

ОБЯЗАТЕЛЬНЫЙ  
КОНТРОЛЬНЫЙ  
ЭКЗЕМПЛЯР

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

ԽՍՀՄ-ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԿԱԿԱՆ  
ԿՈՄԻՏԵՍԻՍ

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ  
ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐԸ  
ՅԵՐՐՈՐԴ ՀՆԳԱՍՅԱԿԻ  
(ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺՆԻ)  
ՓՈՒԱՌՈՒԹՅԱՆ ԼՎԱՍԻՆ

336.3  
Խ-61

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԾԽԵՆՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1939



Յ Ա Ն Կ

ԵՁ

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում . . . . .	3
Խորհրդային փոխառութայինների նշանակությունը սոցիալիստական շինարարության մեջ . . . . .	14
Յերբորդ հնգամյակի 4շերկորդ տարվա բաժնի) պետական փոխառությունը . . . . .	18
Փոխառությունը գյուղում իրացնելու կարգն ու պայմանները . . . . .	21
Գյուղական հասարակայնության անելիքները . . . . .	28
Լոգումզներ . . . . .	32



3686  
39

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Արդեն յերկու տասնյակ տարուց ավել է, վոր յերկրիս քարտեղի վրա հին Ռուսաստանը գոյություն չունի: Յերկրագնդիս մեկ վեցերորդ մասի վրա հաղթականորեն ծածանվում է սոցիալիզմի յերկրի կարմիր դրոշը:

Մեր յերկրում տեղի ունեցած համաշխարհային-պատմական փոփոխությունները ձեռք են բերվել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, քաղաքացիական պատերազմի տարիներին աշխատավորների հերոսական պայքարի, ժողովրդական արևմտասոցիալական վերականգնման ժամանակափոփոխ լարված աշխատանքի, ստալինյան հնգամյակների տարիներին համառ ստեղծագործական աշխատանքի հետեւանքով:

Մեր յերկրում այժմ չկա ժողովրդական անտեսության այնպիսի ճյուղ, վորը Խորհրդային իշխանության տարիների ընթացքում արմատապես չփոխեր իր դեմքը: Արտադրության սոցիալիստական սխտեմն անբաժանորեն իշխում է ԽՍՀՄ-ի ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ: Տնտեսական և կուլտուրական շինարարության բոլոր տեղամասերում մեծագույն



հաղթանակներ են ձեռք բերվել: Մեր հզոր յերկրում հիմնականում կառուցված է սոցիալիզմը:

Խորհրդային Միությունում լուծված է յերկրորդ հնդամյակի հիմնական սրտմական խնդիրը— վերջնականապես վերացված են բոլոր շահագործող դասակարգերը, ամբողջությամբ վոչնչացված են այն պատճառները, վորոնք առաջացնում են մարդու շահագործումը մարդու ձեռքով և հասարակությունը բաժանում են շահագործողների ու շահագործվողների: Սոցիալիստական հասարակությունը ԽՍՀՄ-ում ներկայումս կազմված է յերկու իրար հետ բարեկամ դասակարգերից—բանվորներից և գյուղացիներից վորոնց միջև, նաև այդ դասակարգերի և ինտելիգենցիայի միջև յեղած սահմանները ջնջվում, հետզհետե կորչում են: Բանվորներին, գյուղացիներին և ինտելիգենցիային միացնում է մի ընդհանուր գործ—կոմունիզմի համար մղվող պայքարը: Այդ վճռական հաղթանակը կուսակցությունը և խորհրդային իշխանությունը ձեռք են բերել Մեծ Ստալինի ղեկավարությամբ:

Աղքատ և հետամնաց նախկին ցարական Ռուսաստանը դարձավ հզոր ինդուստրիալ պետություն՝ աշխարհումս արտադրության ամենաառաջավոր տեխնիկայով, ամենահզոր արդյունաբերությամբ:

«Առանց չափազանցության կարելի յե ասել, վոր արտադրության տեխնիկայի տեսակետից, արդյունաբերության ու հողագործության՝ նոր տեխնիկայով հաղեցած լինելու տեսակետից, մեր յերկիրը հանդիսանում է առավել առաջավորը վորեւս ուրիշ յերկրի

համեմատությամբ...» (Ստալին, Հաշվետու ղեկուցում կուսակցության 18-րդ համագումարում Համ. Կ(բ)Կ ԿԿ աշխատանքի մասին):

Ստալինյան յերկու հնդամյակների տարիների ընթացքում ամբողջությամբ ավարտված է ԽՍՀՄ-ի ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը: Իր նշանակությամբ այդ հսկայական խնդրի հաջող կատարման հետևանքով առաջի և յերկրորդ հնդամյակների ընթացքում կառուցված կամ ամբողջությամբ վերակառուցված ձեռնարկություններից արդեն 1937 թվին ստացված է արդյունաբերության ամբողջ արտադրանքի 80 տոկոսից ավելին: Գյուղատնտեսության մեջ աշխատող բոլոր արակտորները և կոմբայների մոտ 90 տոկոսն արտադրել է սոցիալիստական արդյունաբերությունը՝ յերկրորդ հնդամյակում: Գյուղատնտեսության մեքենայինության գծով ամբողջությամբ վերցրած ԽՍՀՄ անցյալ աշխարհիս բոլոր յերկրներից: Ստեղծված են հարյուրավոր նոր Փարբիկաներ և գործարաններ, վորոնք սարքավորված են ժամանակակից տեխնիկայի վերջին խոսքի համաձայն, կառուցված են այնպիսի ղեկանություններ, ինչպես Գինեպրոդեսը, Բելոմոր-Բալտիկյան և Մոսկվա—Վոլգա ջրանցքները: Ստեղծված են արդյունաբերության նոր ճյուղեր: Այսպես, որինակ՝ իարահան Ռուսաստանում համարյա թե չկար ինդուստրացման հիմքը կազմող սև մետալուրգիա, բոլորովին չկար զարգացահինում, ավտո-մեքենայի և տրակտորային արդյունաբերություն, իսկ ներկայումս ԽՍՀՄ արդյունաբերության այդ ճյուղերով դրավել է Յեվրոպայում առաջին տեղը և յերկրորդն աշխարհում: Մեր



քիմիական արդյունաբերությունը, վորը նույնպես համարյա թե չկար ցարական Ռուսաստանում, զբաղել է առաջին տեղերից մեկն աշխարհում: Ելեկտրոններ-դեբաշի արդյունաբերությամբ ցարական Ռուսաստանը զբաղվում էր տասնևհինգերորդ տեղը, իսկ ԽՍՀՄ-ը զուրա յեկավ յերրորդ տեղը:

1913 թվին ցարական Ռուսաստանի արդյունաբերա-կան արտադրանքը մնացած կապիտալիստական յերկրների արդյունաբերության արտադրանքի նկատմամբ կազմում էր մոտավորապես 2,7 տոկոս, իսկ 1938 թ. սոցիալիստական արդյունաբերության արտադրանքն արդեն կազմում էր համաշխարհային արդյունաբերության արտադրանքի մոտ քսան տոկոսը: ԽՍՀՄ-ում ստալինյան յերկու հնգամյակները յերկրի ինդուստրացման հիման վրա հաջող կատարելու հետե-վանքով, ստեղծված է սոցիալիստական, աշխարհումս ամենախոշոր գյուղատնտեսությունը: Ներկայումս մեզ մոտ հաշվում են 243,7 հազար կոլտնտեսություններ, վորոնք միացնում են բոլոր գյուղացիական տնտե-սություններին 18,8 միլիոնը կամ 93,5 տոկոսը: Ան-վերադարձ կերպով հեռավոր անցյալի դիրկն անցավ Ռուսաստանի աղքատ, սոված գյուղը: Կոլտնտեսային կարգը վերջնականապես ամրացավ: Առաջավոր տխ-րիկայով հաղեցած սոցիալիստական գյուղատնտեսու-թյունը զուրա յեկավ առաջին տեղն աշխարհում: Մեզ մոտ ստեղծված է 6350 մեքենատրակտորային կայան-ներ, վորոնք ունեն 394 հազար տրակտորներ և 153500 կոմբայներ: Ցանքաի տարածությամբ, ցորենի, հա-հարի, դարու, վարսակի, վուչի և շաքարի ճակնդեղի

բերքահավաքով ԽՍՀՄ-ը զբաղվում է առաջին տեղն աշխարհում:

Կոլտնտեսական գյուղացիությունն ասլրում է ու-նեվոր, կուլտուրական կյանքով: Կոլտնտեսություններին զբաղական յեկամուտները 1933 թվին յեղած 5661,9 միլիոն ռուբլուց մեծացան մինչև 14180,1 միլիոն սուբլին՝ 1937 թվին: Հացահատիկային շրջաններում մեկ կոլտնտեսային տնտեսությանը տրվող հացահա-տիկի միջին չափը 1933 թվին յեղած 61 փթից բարձ-րացավ մինչև 144 փթի՝ 1937 թվին: Կոլտնտեսային գյուղի բարեկեցության անընդհատ բարելավման մա-սին վկայում է նախ այն, վոր յուրաքանչյուր կոլ-տնտեսականի կողմից սպառվող միսը, ձուկը, ճար-պային նյութերը, շաքարը և հրուշակեղենը վերջին չորս տարում ավելացան ավելի քան յերկու անգամ:

Կոլտնտեսային կարգի հիման վրա աճեցվել է նոր կոլտնտեսային ինտելիգենցիան, մեխանիզատորներին, կոլտնտեսային դաշտերի, ստախանովակաների, ռե-կորդային բերքի համարձակ նովատորներին և վար-պետների ու շաղրավ կադրերը: Սոցիալիզմի շահերը թանկ են և մոտիկ կոլտնտեսային գյուղացիության համար: Թանկ են նրա համար և մոտիկ նրա սրտին մարդիկ, վորոնք սոցիալիստական աշխատանքի որի-նակներ են ցույց տալիս:

Կառավարության վորոշումով այս տարի Մոսկվա-յում բացվում է համամիութենական գյուղատնտեսա-կան ցուցահանդես: Այդ ցուցահանդեսը հանդիսանա-լու յե կոլտնտեսային կարգի հսկայական հաջողու-թյունների մի վառ դեմոնստրացիա: Նա ցույց կտա



ամբողջ աշխարհին սոցիալիստական յերկրագործության մեծ առավելությունները:

Ստալինյան յերկու հնգամյակների տարիներին ընթացքում լայն կերպով ծավալվել է կուլտուրական հիմնարկությունների ցանցը քաղաքում և գյուղում: Կառուցվել են հազարավոր նոր դպրոցներ, ակումբներ, թատրոններ, ստեղծվել են տասնյակ հազարավոր կարմիր անկյուններ, բացվել են հազարավոր դրաղարաններ:

Ստալինյան յերկու հնգամյակներին ընթացքում սոցիալ-կուլտուրական ձեռնարկումների համար պետությունը ծախսել է միութենական, հանրապետական և տեղական բյուջեների միջոցներից ավելի քան 86 միլիարդ ուրբի: Աշխարհիս վոչ մի յերկրում չկա և չի յել կարող լինել աշխատավոր ժողովրդի լայն խավերի կուլտուրական մակարդակի բարձրացման համար արվող նման, իրենց չափերով բացառիկ, ծախսեր:

Մի հանրագումարի բերելով սոցիալիզմի մեծ հաղթանակները Համկ(բ)Կ 17-ից մինչև 18 համագումարի ժամանակաշրջանում ընկ. Ստալինը հայտարարեց՝

«ժողովրդի կուլտուրական զարգացման տեսակետից հաշվետու ժամանակաշրջանը յեղել է ամենայն ճշմարտությամբ կուլտուրական հեղափոխության ժամանակաշրջան»:

Մեր յերկրում կատարված այդ կուլտուրական հեղափոխության արդյունքներից մեկը հանդիսանում է նոր խորհրդային ինտելիգենցիայի ստեղծումը, վորը դուրս է յեկել ժողովրդի ծոցից և սերտորեն կապ-

ված է ժողովրդի հետ և մինչև վերջը նվիրված է Լենինի-Ստալինի մեծ կուսակցությանը:

Սոցիալիզմի փայլուն հաղթանակները— վեթխարի ստեղծագործական վերելքի, աշխատավորների բարձր քաղաքական ակտիվության և սոցիալիստական կազմակերպվածության արդյունք է: Այդ հաղթանակները խորհրդային ժողովրդի համար ապահովեցին բախտավոր և ուրախ կյանք: Այդ հաղթանակների պտուղները որենսդրությամբ ամբացված է մեր դարաշրջանի մեծագույն փաստաթղթում— Ստալինյան Սահմանադրությունում:

ՄՍ ՀՄ-ի ժողովուրդները ձեռք բերին խաղաղ սոցիալիստական աշխատանքի հնարավորություն: Պորհրդային ժողովրդի ազատությունը, բախտավորությունը և անկախությունը արթուն կերպով պահպանում են ամբողջ յերկրի ուշադրությամբ և սիրով չըջապատված անհաղթելի Կարմիր Բանակը և Ռազմա-Մովային նավատորմը: Մեր յերկրի վրա հարձակվելու ամեն մի փորձ ջախջախիչ հարված կստանա ամբողջ խորհրդային ժողովրդի կողմից: Դրանում ավելորդ անդամ համոզվեցին ճապոնական սամուրայները Պասան լճի մոտ, վորոնք փորձում էյին վրոք կոխել մեր սուրբ հողի վրա:

Պատերազմի Փաշխոտական հրձիգները ապարդյուն կերպով փորձում էյին քայքայել մեր հայրենիքի հլ-գորությունը ներսից՝ տարածելով իրենց տրոցկիստական-բուխարինական բանդայի աղետուրան: Այդ լրտեսական-վնասարարական բանդայի ջախջախումը ճանապարհ հարթեց սոցիալիստական շինարարության հետադա, ե՛լ ավելի հզոր հաջողությունների համար:



Մահայն, փոչ մի բողոք չի կարելի մտանալ կապիտալիստական շրջապտման մասին: Անհրաժեշտ է միշտ հիշել, վոր ոտարյերկրյա հետախուզությունները ե՛լ այսուհետե էլ կուզարկեն մեր յերկիրը լքտեսներ, մարդասպաններ, վնասարարներ: Հիշելով այդ մասին, անհրաժեշտ է ե՛լ ավելի բարձրացնել հեղափոխական գոնությունը, ամեն կերպ ամբապնդել կորհուրդներին Յերկրի պաշտպանությունը, ամբապնդել մեր սոցիալիստական հետախուզությունը, ոգնելով նրան ջարդուիշուր և արմատախիլ անել ժողովրդի թշնամիներին:

Վիթխարի յեն ԽՍՀՄ-ի ժողովրդական անտեսության հետագա զարգացման հեռանկարները: Նրանք նշված են յերկրորդ հնդամյա պլանով, վորը հաստատված է ՀամԿ(Բ)Կ 18 համադումարի կողմից: ԽՍՀՄ-ի ժողովրդական անտեսության զարգացման յերրորդ հնդամյա պլանի կատարումը վիթխարի քայլ կլինի ընկեր Ստալինի կողմից դրված հիմնական տրեստական խնդրի լուծման գործում, —մոտակա 10—15 տարվա ընթացքում՝ անտեսական տեսակետից ևս առաջ անցնել դլխավոր կապիտալիստական յերկրներին:

Յերրորդ հնդամյա պլանում դրված յուրաքանչյուր թիվը վիթխարի ստեղծագործական աշխատանքի խաղաղ պատկեր է նկարում:

Ստալինյան յերրորդ հնդամյա կում ժողովրդական յեկամուտն ավելանալու յե 78 միլիարդ ուրբով, այսինքն ավելի, քան յերկու հնդամյակներին միասին վերցրած: Արդյունաբերական արտադրանքի աճը կազմելու յե 84,5 միլիարդ ուրբով, վորը նույնպես

նշանակալից չափով դերազանցում է առաջին յերկու հնդամյակների արտադրանքի աճից միասին վերցրած: Սոյառման արտադրանքի արտադրությունն ավելանալու յե ավելի քան մեկ և կես անգամ:

ՀամԿ(Բ)Կ 18 համադումարը արտադրանքի արժեքն ամբողջ դյուղատնտեսության մեջ սահմանեց յերրորդ հնդամյակի վերջին 30,5 միլիարդ ուրբով՝ յերկրորդ հնդամյակի վերջին յեղած 20,1 միլիարդ ուրբու գիմաց (1926—1927 թվականների դներով) —աճումը 52 տոկոսով: Հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացման աշխատանքների ծրագրերը պետք է ապահովի ստալինյան առաջադրանքի կատարումը, ամեն տարի 8 միլիարդ փութ հացահատիկ հավաքելու մասին, հանելով մեկ հեկտարից 13 ցենտներ միջին բերքատվության: Նախատեսանված է նաև դյուղատնտեսական տեխնիկական կուլտուրաների բերքահավաքի մեծացումը, առանձնապես բամբակինը: Անասնաբուծության պրոբլեմը վերջնականապես կլուծվի յերրորդ հնդամյակում:

Նոր շինարարության պլանով նախատեսված է Վոլգայի և Ուրալի միջև յեղած շրջանում ստեղծել նոր նավթային բաղա- «Յերկրորդ Բաղուն», ծավալել աշխարհում ամենամեծ կառուցման— 3,4 միլիոն կլովատ ընդհանուր կարողություն ունեցող կուլբիշիլյան յերկու հիդրոկայանների շինարարությունը: Իրագործել 1500 նոր ՄՏԿ-ի և հազարավոր այլ նորակառույցների շինարարությունը:

Աշխատավորների նյութական և կուլտուրական



մակարդակի հետագա վերելքի ասպարեզում յերրորդ հնդամյա պլանում նախատեսնված և բարձրացնել ժողովրդական սպառումն ավելի քան մեկ ու կես անգամ: Միջին աշխատավարձը մեծանալու յե 37 տոկոսով: Նշանակալից չափով մեծանալու յեն կորոնտեսականները դրամական յեկամուտները, նրանց կողմից ըստ աշխուրհի ստացվող դյուղատնտեսական արտադրանքի իրացումից:

Սոցիալական ապահովադրության, լուսավորության, առողջապահության ծախսերը, բազմադասակ մայրերին տրվող նպաստները և աշխատավորների կուլտուր-կենցաղային սպասարկման մյուս տեսակները ծախսերը, վորպիսիք արվում են պետության կողմից, մեծանալու յեն մինչև 53 միլիարդ ուրբլին՝ 1937 թվին յեղած 30,8 միլիարդ ուրբլու դիմաց (ամումը ավելի քան 1,7 անգամ):

Մեծ խնդիրներ են դրված յերկաթուղային և ջրային տրանսպորտի պարզացման ասպարեզում, նույնպես և տնտեսական և կուլտուրական շինարարության մյուս ասպարեզներում:

Յերրորդ հնդամյա պլանում բացառիկ ուշադրություն է նվիրված մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանունակության հետագա ամրապնդմանը:

Կուսակցությունն ու կառավարությունը և անձնապես ընկ. Ստալինն անխոնջ կերպով հոգում են բանվորա-դյուղացիական կարմիր Բանակի և Ռադ-մո-ծովային Նավատորմի հզորությունն ամրապնդելու մասին: Ստալինյան յերրորդ հնդամյակի կատար-

րումն է՛լ ավելի կուժեղացնի խորհրդային պետության բանակի և նավատորմի մարտական ուժերը:

Կապիտալիստական յերկրներում հասարակությունը ավելի ու ավելի խորն է քայքայվում նոր համալխորհային տնտեսական ճգնաժամից, վորը վորոց և չպրտում միլիոնավոր նոր դործազուրկներ, վորոնք ավելացնում են աղքատությունը և հուսահատությունն աշխատավոր մասսաների մեջ:

Արդեն յերկրորդ տարին է ընթանում իմպերիալիստական պատերազմը, վորը տեղի ունի հսկայական տերիտորիայի վրա և ներդրավել է 500 միլիոնից ավելի բնակչություն:

Կապիտալիստական յերկրներում տեղի ունեցող նոր տնտեսական ճգնաժամի, քաղցի, աղքատության և դործադրկության այդ մոսյլ Փոնի վրա առանձնապես վառ կերպով է յերևում խորհրդային միության ամումն ու մեծությունը:

Սոցիալիզմի հաղթանակները ԽՍՀՄ-ում վորկեվորում են աշխարհիս ճնշված ժողովուրդներին, Փաշիզմի դեմ, պատերազմի դեմ, կապիտալիստների և կալվածատերերի իշխանության դեմ պայքարելու համար:

Յերրորդ հնդամյա պլանի մեծ խնդիրների իրադործումը սերտորեն կապված է բանվորների, դյուղացիների և խորհրդային ինտելիգենցիայի ամենակենսական շահերի հետ: Յեմ կասկած չկա այն բանում, վոր ստալինյան յերրորդ հնդամյակը նույնպես հաջող կկատարվի, ինչպես և նախընթաց յերկու հնդամյակները: Այդ բանի դրավականն է խորհրդային ժողովրդի բարոյական քաղաքական միասնությունը, նրա



անսահման նվիրվածութիւնն իր հայրենիքին, նրա խանդավառութիւնը և ստեղծարարական նախաձեռնութիւնը, վորն իր վառ արտահայտութիւնն և դտել ստախանովական շարժման հզոր զարգացման մեջ: Այդ բանի գրավականն և նաև աջն, վոր խորհրդային ժողովրդի դրուել և կանգնած փորձված և մարտերում կոփված բոլշեվիկներին կուսակցութիւնը, վորին ղեկավարում և մարդկության հանճար սոցիալիստական հաղթանակների ստեղծող ու կազմակերպող Մեծ Ստալինը:

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՓՈԽԱՌՈՒՅՑՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՅՑՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒՅՑԱՆ ՄԵՋ

Սոցիալիզմի կառուցման դործում ձեռք բերված հաջողութիւնները հնարավոր չէին լինի առանց խոշոր նյութական ծախսերի: Հետագա տնտեսական և կուլտուրական շինարարութեան վիթխարի ծրագրի իրադործման համար խորհրդային պետութեանը հարկավոր են հսկայական միջոցներ:

ԽՄՃ-ի տնտեսական զարգացման առանձնահատկութիւնն աջն և, վոր այդ հսկայական միջոցները պետութիւնն ստանում և յերկրի ներսում առանց դրսի ստրկացուցիչ վարկերի և փոխառութիւնների:

Սոցիալիստական շինարարութեան Փինանսավորման հիմնական աղբյուր հանդիսացել և հանդիսանում և ներկայումս սոցիալիստական տնտեսութեան—արդյունաբերութեան, արանսպորտի, գյուղատնտեսութեան և առևտրի կուսակումները: Մենք չէինք կարող ընթանալ կապիտալիստական յերկրների ուղիով, վորոնք

իրենց արդյունաբերութիւնը կառուցում էին զաղութային ժողովուրդներին թալանելու հաշիւն, դավթողական պատերազմների կամ ստրկացուցիչ կոնցեսիաների և փոխառութիւնների հաշիւն: Գաղութային թալանները և դավթողական պատերազմներն անհամատեղելի յեն խորհրդային իշխանութեան բնույթի հետ: Փոխառութիւններ և վարկեր ստանալ կապիտալիստական յերկրներից մենք չէինք կարող, վորովհետև այդ կնշանակեր կամովին ստրկանալ իմպերիալիստներին: Պրոլետարական հեղափոխութեան հանճարեղ առաջնորդներ Լենինն ու Ստալինը ցույց տվին մեր յերկրի ինդուստրացման միակ հնարավոր ուղին—սոցիալիստական կուսակման ուղին: Յեւ խորհրդային Միութեան աշխատավորները, հաղթահարելով խոշորագույն դժվարութիւններ, ընթացան այդ ուղիով:

Մտցնելով ինսյոդութեան ուժիւմ, հաշիւի առնելով յուրաքանչյուր խորհրդային կուպեկը, պրոլետարական պետութիւնը կուսակում էր ստալավոր արդյունաբերութիւն ստեղծելու համար անհրաժեշտ միջոցներ: Զերկու հնգամյակների ընթացքում խորհրդային պետութիւնը ծախսել է արդյունաբերութեան, դյուղատնտեսութեան և արանսպորտի կապիտալ շինարարութեան համար 166 միլիարդ ուլբլի:

Ստալինյան առաջին յերկու հնգամյակների վայրուն կատարումն ամբողջութեամբ հաստատեց այդ ճանապարհի ճշտութիւնը: Անցյալում հետամնաց և աղքատ յերկիրը դարձավ ամենաառաջավոր յերկիրն աշխարհում, վորը կախում չունի կապիտալիստական հափշտակիչներից, մի յերկիր՝ վորն աշխարհին ցույց



և տալիս դիտութեան և կուլտուրայի մեծ նվաճումներ :

Սոցիալիստական շինարարութեան Փինանսավորման հիմնական աղբյուրների հետ միասին, վորոնք կազմվում են մեր ժողովրդական տնտեսութեան կուտակումներից, մեծ դեր են խաղում և բնակչութեան միջոցները, վորպիսիք ներդրավում են պետական փոխառութեաների և խնայողական դրամարկղների միջոցով : Խորհրդային փոխառութեանները տարեց-տարի, ավելի ու ավելի ժողովրդականութեան են ձեռք բերում աշխատավորների մեջ, վորոնք իրենց խնայողութեանները խանդավառութեամբ են փոխ տալիս պետութեանը :

Խորհրդային ժողովուրդը համոզված է այն բանում, վոր նրա փողմից պետական փոխառութեաններին մեջ տեղավորվող միջոցները կողտադրծվեն նրա իսկ շահերի համար, վորովհետև սոցիալիստական պետութեան շահերն անբաժան են ժողովուրդի շահերից : Ահա թե ինչու, չսահմանափակելով իր մասնակցութեանը սոցիալիստական շինարարութեան դործում ակտիվ արտադրական աշխատանքով, աշխատավորները նույնպես ակտիվ Փինանսական ուղևութեան են ցույց տալիս խորհրդային պետութեանը՝ փոխ տարով նրան իրենց խնայողութեանները՝ ժողովրդական տնտեսութեան և կուլտուրայի զարգացման համար :

Փոխառութեանների պարտատոմսատերերի քանակը ԽՍՀՄ-ում ներկայումս անցնում է 50 միլիոն մարգուց : Պետական բյուջեյում փոխառութեաններից մուտք յեղած միջոցների ընդհանուր գումարն առաջին և յերկրորդ հնդամյակներում հասավ համարյա 25 միլիարդ ուրբլու : 1938 թվին փոխառութեաններից մուտք յեղավ 5 միլիարդ ուրբլուց ավելի :

Այդ—խորհրդային ժողովրդի նյութական բարեկեցութեան աճման, դեպի իր հայրենիքն ունեցած նրա անսահման սիրո և նվիրվածութեան վառ ցուցանիչներից մեկն է :

Կապիտալիստական յերկրներում նույնպես փոխառութեաններ են բաց թողնվում, բայց այնտեղ աշխատավորները չեն ողնում և չեն ել կարող ողնել նրանց, վորովհետև այդ փոխառութեաններն ուղղված են ժողովրդի շահերի դեմ :

Կապիտալիստական պետութեանների փոխառութեանները սովորաբար մարվում են հարկերով, վորոնք իրենց ամբողջ ծանրութեամբ ընկնում են աշխատավորների լայն մասսաների ուսերին : Փոխառութեանները ստացվող միջոցները կապիտալիստների մոտ ծախսվում են բյուջեյային դեֆիցիտները ծածկելու համար, վոտտեկանութեանը, ժանդարմերիան, բանակը և բյուրոկրատական ապարատը պահելու համար : Փոխառութեանները կապիտալիստների մոտ բաց են թողնվում թալանչիական պատերազմներ նախապատրաստելու և վարելու համար, ծառայում են վորպես դեռ բանվոր դասակարգի հեղափոխական շարժումը ձեռնելու համար :

Պետական փոխառութեանները ԽՍՀՄ-ում սկզբունքորեն տարբերվում են կապիտալիստական յերկրներում բաց թողնվող փոխառութեաններից : Սըկըսած 1924 թվից խորհրդային պետութեան բյուջեն վոչ մի անգամ դեֆիցիտ չի ունեցել, այսինքն՝ ծախսերի դերադանցում յեկամուտներից : 1939 թվի բյուջեյի ծախսերի համարյա յերկու յերրորդը տրվում է ժողովրդական տնտեսութեան և սոցիալ-կուլտուրա-

3686  
39





կան ձեռնարկումների Ֆինանսավորմանը: Մեր բյու-  
ջեն ամբողջութամբ ծառայում է խորհրդային ժո-  
ղովրդի շահերին, վորովհետև այն ամբողջությամբ  
ուղղված է դեպի աշխատավորների կյանքի հետադա-  
րարելավումը:

Ահա թե ինչու յուրաքանչյուր փոխառություն  
բաց թողնելը մեր յերկրում— մեծ քաղաքական դեպք  
է: Ահա թե ինչու մեր փոխառությունների իրացման  
գործում վիթխարի վերելքով մասնակցում են քաղա-  
քի և դյուղի տասնյակ միլիոնավոր աշխատավորներ:  
Յուրաքանչյուր խորհրդային քաղաքացի իր պարտքն  
է համարում բաժնեզրկել փոխառությանը:

Խորհրդային փոխառություններում պետական  
շահերը գուդակցում են յուրաքանչյուր բաժանորդի  
անձնական շահերի հետ, վորին փոխառությունները  
բարձր յեկամուտ են տալիս: Առաջին և յերկրորդ

հնգամյակների տարիներին պետությունը փոխառու-  
թյունների դժով յեկամուտներ— տոկոսներ և շահում-  
ներ է վճարել բնակչությանը յերեք միլիարդ ուրբ-  
ուց ավելի:

### ՅԵՐՐՈՐԴ ՀՆԳԱՍՅԱԿԻ (ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺՆԻ) ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒՅՈՒՆԸ

Յերրորդ հնգամյակի (յերկրորդ տարվա բաժնի)  
պետական փոխառությունը կառավարությունը բաց  
է թողել 6 միլիարդ ուրբի գումարով: Իր պայման-  
ներով այդ փոխառությունը համարյա չի տարբեր-  
վում Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժնի)  
փոխառությունից: Նոր փոխառությունը, ինչպես և

նախընթացը, բաց է թողնվում 20 տարվա ժամկետով  
և նույնպես բաղկացած է յերկու մասերից— անպայ-  
ման շահող և տոկոսաբեր: Յերկու մասերի յեկա-  
մուտներն էլ սահմանված են տարեկան 4 տոկոսի  
հաշվից:

Յերկու մասերի (անպայման շահող և տոկոսա-  
բեր) յեկամուտների վճարման ձևերը տարբեր են:

Փոխառության անպայման շահող մասի յեկամու-  
տը վճարվում է շահումների ձևով, իսկ տոկոսաբե-  
րինը՝ կտրոսները վճարելու ձևով:

Անպայման շահող մասով ամեն տարի, փոխառու-  
թյան ամբողջ ժամկետի ընթացքում, տեղի կունենա  
4 խաղարկություն և, այսպիսով, 20 տարվա ընթաց-  
քում տեղի կունենա շահումների 80 խաղարկություն:  
Խորը 80 խաղարկություններով փոխառության յու-  
րաքանչյուր 100 միլիոն ուրբու համար խաղարկվում  
են 1 միլիոն շահում 158 միլիոն 888 հազար ուրբի  
գումարով: Յուրաքանչյուր պարտատուս 80 խաղար-  
կություններից վորևէ մեկում անպայման շահում է:  
Այդ պատճառով էլ փոխառության այդ մասը կոչ-  
վում է անպայման շահող:

Տոկոսաբար մասի յեկամուտը վճարվում է ամեն  
տարի— 1940 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1959 թվի  
դեկտեմբերի 1-ը, կտրոսը ներկայացնելուն պես: Այդ  
մասի յուրաքանչյուր պարտատուսին կից կա 20 կրտ-  
րոն: Նրանցից յուրաքանչյուրի վրա նշանակված է  
արժեքը և վճարման ժամկետը (որինակ 1940 թվի  
դեկտեմբերի 1-ին, 1941 թվի դեկտեմբերի 1-ին և  
այլն): Կտրոսների արժեքը տարբեր է, այն կախված



է պարտատմասի արժեքից, այդպէս, որինակ՝ 100  
նուբլիանոց պարտատմասի արժեքը՝ 4 ունբլի, 500  
նուբլիանոցինը— 20 ունբլի և այլն:

Տոկոսաբեր մասի պարտատոմսերի հետզնումը  
(կամ մարումը) կկատարվի հինգ տարվա ընթացքում՝  
ամեն տարի հավասար մասերով: Այն կսկսվի 1955  
թվի դեկտեմբերի 1-ից և կավարտվի 1959 թվին:

Յերրորդ հնգամյակի (յերկրորդ տարվա բաժնի)  
փոխառութիւնը բաց է թողնված 500, 200, 100, 50, 25,  
և 10 ունբլի արժողութիւն ունեցող պարտատոմս-  
երով՝ անպայման շահող մասով, և 500, 200, 100 և  
25 ունբլի արժողութիւն ունեցող պարտատոմսերով՝  
տոկոսաբեր մասով:

Շահումները սահմանված են 3000, 1000, 500,  
200, և 150 ունբլի՝ հարյուր ունբլանոց պարտատոմ-  
սի համար: Շահումի դումարի մեջ մտնում է նաև  
պարտատոմսի արժեքը:

Անպայման շահող մասի 500 և 200 ունբլիանոց  
պարտատոմսերի վրա համապատասխանաբար նշանակ-  
ված են միևնույն սերիայի հինգ կամ յերկու համար-  
ներ:

Շահումների խաղարկութիւնները կատարվում են  
այնպէս, վոր 200 և 150 ունբլու շահումները միան-  
գամից ընկնում են տվյալ սերիայի պարտատոմսերի  
բոլոր 50 համարներին: Յեթե հարյուր ունբլիանոց  
պարտատոմսին ընկել է 200 ունբլու շահում, ապա  
500 ունբլիանոց պարտատոմսով վճարվում է 1000  
ոնբլի, 150 ունբլի շահելու դեպքում—750 ունբլի:  
3000, 1000 և 500 ունբլու շահումները ընկնում են

միայն վորևէ սերիայի 50 համարներից մեկին, իսկ  
այդ սերիայի մնացած 49 համարները շահում են  
միաժամանակ 150 ունբլի: Այդպիսով՝ 500 ունբլիա-  
նոց պարտատոմսը, վորի վրա նշանակված են միև-  
նույն սերիայի հինգ համարները, կարող է միաժա-  
մանակ շահել հինգ շահում 200-ական ունբլու կամ  
150-ական ունբլու, կամ մեկ շահում՝ 500 ունբլու և  
4 շահում՝ 150-ական ունբլու: Նույնը և 1000 ունբլի  
շահելու դեպքում՝ մեկ պարտատոմսի համար կարե-  
լի յե ստանալ մեկ շահում՝ 1000 ունբլու և 4 շա-  
հում՝ 150-ական ունբլու: Նույնը և 3000 ունբլի շա-  
հելու դեպքում:

10, 25 և 50 ունբլու արժողութիւն ունեցող  
պարտատոմսերով վճարվում է 100 ունբլիանոց պար-  
տատոմսին ընկած շահումի համապատասխան մասը  
(1/10, 1/4, 1/2):

## ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ ԻՐԱՅՆԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Յերրորդ հնգամյակի (յերկրորդ տարվա բաժնի)  
պետական փոխառութիւն բաժնեգրութիւնը կազմա-  
կերպվում է գյուղում այնպէս, ինչպէս և քաղաքում,  
լայն մասսայական— բացատրական աշխատանքների  
հիման վրա: Ընդամին՝ ամենախիստ կերպով պետք է  
պահպանվի բաժնեգրութիւն կամավորութիւնը:

Կոլտնտեսականները, գյուղական տնայնագործա-  
կան— արհեստագործական արտեղների անդամները և  
մենատնտես— գյուղացիները կարող են փոխառութիւն



պարտատոմսերը ձեռք բերել ցանկացած դումարով, վճարելով այդպիսիք կամ միանվազ, բաժնեդրու-  
թյան ժամանակ, կամ մաս-մաս: Յեթե բաժնեդրու-  
թյան ժամանակ բաժանորդն ամբողջութեամբ և վը-  
ճարում պարտատոմսի արժեքը, նրան հենց այդտեղ  
առ ձեռն տրվում են և պարտատոմսերն ամբողջու-  
թեամբ: Իսկ յեթե բաժանորդը ցանկանում է պար-  
տատոմսերը վճարել մաս-մաս, նրան տրվում է  
տասնամսյա ժամկետ (1939 թ. ողոստոսից մինչև  
1940 թվի մայիսը), վորի ընթացքում նա պետք է  
վճարի պարտատոմսերի արժեքը:

Առաջին մուծումը վճարվում է բաժնեդրութեան  
ժամանակ և, համեմայն դեպս վոչ ուշ, քան բաժնե-  
դրութեանից տասն ուր հետո:

Փոխառութեանը բաժնեդրված կոլտնտեսականը  
կամ կոլտնտեսուհին պարտատոմսերի արժեքը վնա-  
րում է միայն կանխիկ դրամով: Արդեւում է կոլ-  
տնտեսութեաններէ վարչութեաններին՝ վճարել կոլ-  
տնտեսականներէ բաժնեդրութեանը կոլտնտեսութեան-  
ներէ միջոցներէց, նաև այն դումարներէց, վորպիսիք  
հասնում են կոլտնտեսականներին՝ ըստ աշխորերի  
կամ նրանց հետ ունեցած այլ հաշվարկումներէ: Փո-  
խառութեան իրացումը դյուղում՝ կազմակերպում են  
դյուղխորհուրդները շրջանային գործադիր կոմիտեանե-  
րի ղեկավարութեամբ: Փոխառութեանը կոլտնտեսա-  
կաններէ և մենատնտես դյուղացիներէ մեջ իրացնելու  
հիմնական պայմանը—գյուղխորհուրդներէ կողմից փո-  
խառութեան լիազորներէ միշտ ընտրութեանն է: Այդ  
լիազորները պետք է բոլոր կոլտնտեսականներին ընդ-

դրկեն փոխառութեան բաժնեդրութեամբ և կազմա-  
կերպեն մուծումները ժամանակին հալաքելը: Նրանց  
վստահվում է պետական մեծ կարևորութեան ունե-  
ցող գործ: Այդ պատճառով՝ փոխառութեան լիազոր-  
ները պետք է առանձնացվեն հեղինակավոր և լայն-  
գույն ակտիվիտո- կոլտնտեսականներէց և դյուղական  
ինտելիգենցիայէց: Նրանց պետք է առաջադրեն կոլ-  
տնտեսականներէ ընդհանուր ժողովները, կոլտնտեսա-  
կաններէ վարչութեանները և դյուղական հասարա-  
կական կազմակերպութեանները: Գյուղական խոր-  
հուրդները և շրջանային խնայողական դրամարկղը  
լիազորներէ թեկնածուներէ ցուցակները հաստատման  
համար ներկայացնում են շրջանային գործադիր կո-  
միտեյի նախադասութեանը:

Ինչպէ՞ս է կազմակերպվում փոխառութեան լիա-  
զորի աշխատանքները: Յուրաքանչյուր լիազոր դյուղ-  
խորհուրդի կողմից կցվում է կոլտնտեսականներէ վորոշ  
խմբին, վորոնց մեջ նա բաժնեդրութեան է անցկաց-  
նում, իսկ հետո՝ մաս-մաս վճարումներէ ամբողջ  
ժամանակաընթացքում հալաքում է մուծումները:  
Նախքան աշխատանքներին անցնելը, լիազորը պար-  
տավորապէս և տալիս դյուղխորհուրդին այն մասին,  
վոր իր վրա վերցնելով բաժնեդրութեանն անցկացնե-  
լու և բաժանորդներէց դրամները հալաքելու աշխա-  
տանքները, նա շրջանային խնայողական դրամարկղի  
առաջ նյութական պատասխանատվութեան և կրում  
հալաքած դրամներէ և բաժանորդներին բաժանելու  
համար ստացված պարտատոմսերի անվթարութեան հա-  
մար: Լիազորն իր վրա պարտավորութեան է վերցնում



նաև փոխառութեան հալածքած դրամները ժամանակին հանձնել չըջանային Ֆինանսական բաժնի դորձակային կամ, չըջանային խնայողական դրամարկղի ցուցմունքով, — այն դյուղական խնայողական դրամարկղին, վորին կցված է լիազորը փոխառութեան հաշվարկումներէ համար:

Գյուղխորհուրդը յուրաքանչյուր լիազորին տալիս է վկայական փոխառութեան բաժնեդրութեանն անցկացնելու և դրամները հալածելու համար: Լիազորը դյուղական խորհրդից ստանում է բաժնեդրութեան թերթերի անհրաժեշտ քանակութիւն:

Փոխառութեան բաժնեդրութեան դրամները հալածելու համար լիազորը պետք է Ֆինանսական դորձակայինց ստանա հաշվարկային անդորրագրեր՝ (արձաններով) իրեն կցված բաժանորդներէ քանակով և իր անձնական հաշվի պատճենը:

Հաշվարկումները դյուղխորհուրդների լիազորների հետ ինչպէս և փոխառութեան հաշվառումն ու հաշվետվութիւնը տանում են Ֆինանսական դորձակայինները: Այն դյուղական խորհուրդներում, վորտեղ խնայողական դրամարկղներ կան, այդ հաշվարկումները տանում են խնայողական դրամարկղները: Նման դյուղխորհուրդների լիազորները փոխառութեան բոլոր հաշվարկումները ձեռնարկում են միայն խնայողական դրամարկղներում:

Կորսնտեսականի հետ ունեցած գրույցի հիման վրա՝ լիազորը բաժնեդրութեան թերթում դրանցում է թե ինչ գումարի և վոր մասի (անդամի շահող թե տոկոսաբեր), նաև թե ինչ արժողութեամբ պար-

տառոմսեր և ցանկանում ձեռք բերել բաժանորդը: Կորսնտեսականն այդ տեղեկութիւնները բաժնեդրութեան թերթերում հաստատում է իր ստորագրութեամբ:

Բաժնեդրութեանն ավարտելուց հետո՝ լիազորները բաժնեդրութեան թերթերը հանձնում են դյուղխորհրդին: Այստեղ նրա մեջ արված բոլոր դրանցումներն ստուգվում են մանրամասնորեն, թերթերը վավերացվում են դյուղխորհրդի նախագահի և ոժտանդակող հանձնաժողովի նախագահի ստորագրութիւններով և հետո ստորագրութեամբ հանձնվում են չըջանային Ֆինանսական բաժնի դորձակային-պահելու, փոխառութեան բաժնեդրութեան հաշվառման և լիազորների հետ հաշվարկումներ անելու համար:

Այն փաստաթուղթը, վորի հիման վրա լիազորը մուծումներ է ստանում բաժանորդներից և պարտատոմսեր է տալիս նրանց, հաշվարկային դրքույկներ են (և նրանց արձատները): Նման անդորրագիր լիազորն առձեռն տալիս է յուրաքանչյուր բաժանորդին՝ յերեք որվա ընթացքում բաժնեդրութեանից հետո: Յեթե բաժանորդն առաջին մուծումը վճարում է բաժնեդրութեան ժամանակ, ապա լիազորը պարտավոր է հաշվարկային անդորրագիր տալ նրան՝ առաջին իսկ մուծումը նրանից ստանալու ժամանակ:

Անդորրագիրը, վորի մեջ նշվում են բաժնեդրութեան թերթում կատարված բոլոր դրանցումները, մնում է բաժանորդի մոտ՝ մինչև բաժնեդրութեան ամբողջ դումարը նրա կողմից լրիվ չափով վճարելը և պարտատոմսերն ստանալը: Հերթական մուծումն



ստանալով բաժանորդից, լիազորել վճարված գումարը  
դրանցում և բաժանորդի կողմից ներկայացվող հաշ-  
վարկային անդորրագրում, նաև այդ անդորրագրի  
արձատում, վորը պահվում և լիազորի մոտ: Դրամն  
ստանալու համար լիազորն ստորագրում և անդոր-  
րագրի վրա, իսկ բաժանորդը— անդորրագրի արձա-  
տի վրա: Այդ յերկու ստորագրութուններն ել հաս-  
տատում են մեկ կողմից այն, վոր կոլտնտեսականը  
վճարել և հերթական մուծումը, իսկ մյուս կողմից  
այն, վոր լիազորն ստացել և դրամը:

Պարտատոմսերը հանձնվում են բաժանորդներին՝  
հաշվարկային անդորրագրերի հիման վրա, բաժանոր-  
դագրութունը լրիվ չափով վճարելուց հետո:

Պարտատոմսերը տալու ժամանակ լիազորն ան-  
դորրագրի արձատի վրա և հաշվարկային անդորրա-  
գրում նշում և պարտատոմսերի գումարը և այդ  
պարտատոմսերի հանձնման օրը: Պարտատոմսերն ըս-  
տանալու համար բաժանորդն ստորագրում և անդոր-  
րագրի արձատի վրա, իսկ լիազորը հաշվարկային  
անդորրագրում իր ստորագրությամբ հաստատում և  
պարտատոմսերի գումարը տալու օրը: Ընդամին՝ հաշ-  
վարկային անդորրագրերը վերցվում և բաժանորդից:  
Լիազորը պարտավոր և հաշվարկային անդորրագրերը  
և այդ անդորրագրերի արձատները պարտատոմսերը  
բաժանորդներին տալուց հետո հանձնել շրջանային  
ֆինանսական բաժնի գործակալին:

Լիազորները պարտավոր են բացատրել բաժա-  
նորդներին հաշվարկային անդորրագրերը խնամքով  
պահելու անհրաժեշտութունը: Յեթև բաժանորդը,

վճարելով բոլոր մուծումները, վորևե պատճառով չի  
ստացել իր պարտատոմսերը լիազորից, ապա, ունե-  
նալով իր ձեռքին հաշվարկային անդորրագիր, նա  
կարող և մինչև 1941 թվի հունիսի 1-ն ստանալ այդ-  
պիսիք շրջանային խնայողական դրամարկղում: Այդ  
ժամկետից հետո բաժանորդը կորցնում և պարտա-  
տոմսերն ստանալու իրավունքը:

Այն փաստաթուղթը, վորի մեջ յերևում են փո-  
խառության լիազորի բոլոր հաշվարկումները շրջա-  
նային ֆինանսական բաժնի գործակալի հետ, հանդի-  
սանում և անձնական հաշվի պատճենը: Այդ փաս-  
տաթղթում գործակալը նշում և հաշվարկային ան-  
դորրագրի և պարտատոմսերի տալը լիազորին, նաև  
փոխառության բաժնեգրության հավաքած դրամները  
նրանից ստանալը:

Փոխառության բաժնեգրութունը կոլտնտեսական-  
որակտորիստների մեջ անց են կացնում ՄՏԿ-ի տեղի  
գյուղխորհուրդները՝ ՄՏԿ-ին կից ոժանդակիչ հանձ-  
նաժողովների հետ միասին: Կոլտնտեսական-  
տորիստների մեջ բաժնեգրութուն անցկացնելու, բաժ-  
նեգրության մուծումները նրանցից հավաքելու և վը-  
ճարված պարտատոմսերը տալու համար՝ ՄՏԿ-ն ա-  
ռանձնացնում են լիազորներ, վորոնք իրենց աշխա-  
տանքներն անց են կացնում այն նույն կարգով, ինչ-  
պես և գյուղխորհուրդների լիազորները:

Հաշվարկումները փոխառության լիազորների  
հետ ՄՏԿ-մ գրվում և ՄՏԿ-ի հաշվապահության  
վրա:

Գյուղխորհուրդի լիազորը փոխառության աշխա-



տանըները համար վարձատրություն և ստանում իր կողմից հավաքած մուծումների դումարի 2 տոկոսի չափով: Այդ իսկ չափով են վարձատրություն ստանում և ՄՏԿ-ի լիազորները կոլտնտեսական-տրակտորիստներից մուծումներ հավաքելու աշխատանքները համար:

Այդ վարձատրությունը չըջանային խնայողական դրամարկղը վճարում և յերեք ժամկետում՝ վոչ ուշ 1939 թվի հոկտեմբերի 1-ից, 1940 թվի հունվարի 1-ից և փոխառության հաշվարկումներն ավարտելուց հետո: Փոխառության բաժնեգրության մուծումները ժամկետից առաջ հավաքող լիազորներին վարձատրությունը տրվում և ամբողջութամբ՝ յերբ նա ավարտում և մուծումների հավաքելը:

### ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Յերբորդ Հնդամյակի (յերկրորդ տարվա բաժնի) պետական փոխառության բաժնեգրության հաջող անցկացումը կոլտնտեսային դյուղում—կարևոր տնտեսական և քաղաքական խնդիր և: Այդ խնդիրն իրականացնելու համար պետք և մորթիլիզացիայի յենթարկվի բոլոր դյուղական կուսակցական, կոմյերտական և հասարակական կազմակերպությունների ուղղությունը:

Ընդգրկել ամբողջ դյուղական բնակչությունը փոխառության բաժնեգրությամբ, կազմակերպել բաժնեգրության մուծումների լիակատար և ժամանակին վճարում—ահա թե ինչն և վճուրդ փոխառության հաջողությունը դյուղում: Դրա համար ամենից

առաջ անհրաժեշտ և դյուղի աշխատավորների մեջ յայն ծավալել մասսայական աշխատանքը՝ խորհրդային փոխառությունների նշանակությունը բացատրելու դժով: Մասսայական բացատրական աշխատանքի արդյունքը պետք և լինի գիտակցել տալ յուրաքանչյուր կոլտնտեսականին և մենատնտեսին, թե ինչի համար են ծախսվում փոխառությունների միջոցները, թե ինչ ոգուտ և շահ են բերում նրանք աշխատավորներին:

Յուրաքանչյուր բաժանորդ պետք և նույնպես գիտակցել, վոր հոժարակամ իր վրա վերցնելով վորոշ պարտավորություններ իր պետության հանդեպ, նա պարտավոր և ճշտությամբ և պայմանավորված ժամկետներին կատարել այդ պարտավորությունները:

Փոխառության մասսայական աշխատանքներում դյուղում խոշոր դեր և խաղում կենդանի խոսքը: Հասարակ և հասկանալի լեզուն, հազեցած տեղական կյանքից վերցրած կոնկրետ օրինակներով և փաստերով, ավելի հասկանալի ու համոզիչ են: Անհրաժեշտ և փոխառության բաժնեգրությունից առաջ առանձնացնել յավագույն ագիտատորներին և պրոպագանդիստներին դյուղական կուսակցական և կոմյերտական ակտիվից, անվանի կոլտնտեսականներից և կոլտնտեսուհիներից, դյուղական դպրոցի ուսուցիչներից, մանրամասն հրահանգել նրանց և մատակարարել բոլոր հարկավոր նյութերով:

Փոխառության բաժնեգրությունն անցկացնելու գործում մեծ ոգնություն պետք և ցույց տա մամուլը: Կոլտնտեսային բազմատիրաժ և պատի թերթերը



պետք է իրենց եջերում սխտեմատիկորեն լուսաբանեն փոխառութեան բաժնեգրութեան ընթացքը, զետեղեն առաջավոր կոլտնտեսականներէ կարծիքը փոխառութեան մասին, ցույց տան լավագույն լիազորներէ աշխատանքը: Այդ անկասկած կոթանդակի փոխառութեան հաջող իրացմանը:

Մասնաշաղկան ազխոացիայի և պրոպագանդայի հետ մեխսին փոխառութեան բաժնեգրութեան հաջողութեանը նույնպէս կապված է փոխառութեան կազմակերպչական տեխնիկական աշխատանքներէ հստակ դրվածքից: Այդ նշանակում է, վոր պետք է վաղորոք ընտրել փոխառութեան լիազորներ և բաշխել նրանց ըստ տեղամասերի: Յուրաքանչյուր լիազորին պետք է իր ժամանակին տալ բաժնեգրութեան թերթերի բնանկներ և փոխառութեան հաշվարկային անդորրագրեր: Անհրաժեշտ է սովորեցնել լիազորներին այդ փաստաթղթերը ճշտորեն լրացնելը: Մեծ ողնութեան կարող է ցույց տալ այդ աշխատանքներում գյուղխորհուրդներին և փոխառութեան լիազորներին՝ գյուղական ինտելիգենցիան—ուսուցիչները, բժիշկները, գյուղատնտեսները, խրճիթավարները և այլն:

Փոխառութեան բաժնեգրութեան ավարտումը վոչ մի չափով չի նշանակում, վոր փոխառութեան աշխատանքները վերջացան: Փոխառութեան հաջողութեանը մտնում է բաժնեգրութեան մուծումներն իր ժամանակին հավաքելը: Այդ պատճառով գյուղական հասարակայնութեան առաջ խնդիր է դրված— վոչ միայն հաջողութեամբ անցկացնել բաժնեգրութեանը, այլև ամբողջնել ձևով բերած հաջողութեանները՝ փո-

խառութեան միջոցները ժամանակին և լրիվ չափով հավաքելու միջոցով:

Չի բացառվում այն, վոր հնարավոր է վորևէ տեղում պահպանված և մինչայժմս ղեռնս չմերկացված թշնամու մնացորդները կիրորձեն խանդարել փոխառութեան հաջող իրացմանը: Հարկավոր է չթուլացնել գլոնութեանն այն բանի համար, վորպէսզի բացել և մերկացնել փոխառութեան հաջողութեանը վիժեցնելու համար ուղղված թշնամական դործողութեանները:

Ամբողջ գյուղական հասարակայնութեան պատվի դործն է— ապահովել Յերրորդ Հնդամյակի (յերկրորդ տարվա բաժնի) պետական փոխառութեան բաժնեգրութեան հաջող անցկացումը՝ կոլտնտեսային գյուղի կողմից:

Փոխառութեան հաջողութեանը ցույց կտա ամբողջ աշխարհին՝ խորհրդային ժողովրդի անհողդող կամքը— սոցիալիզմի կառուցումն ավարտել մեր յերկրում իր սեփական միջոցներով, առանց դրսի ստրկացուցիչ վարկերի և փոխառութեաններին:



## Լ ՈՋ ՈՒ Ն Գ Ն Ե Ր

Յերրորդ Հնդամյակի (յերկրորդ տարվա բաժնի) Պետական փոխառութեան բաժնեգրութեանն անցկացնելու համար:

Յերրորդ Հնդամյակի (յերկրորդ տարվա բաժնի) փոխառութեան բաժնեգրութեամբ նոր միջոցներ տանք կուսակցութեան 18-րդ համագումարի փողմից զբված պատմական խնդրի կատարման համար, — տնտեսական տեսակետից ևս հասնել ու առաջ անցնել առավել զարգացած կապիտալիստական յերկրներին:

Յերրորդ Հնդամյակի (յերկրորդ տարվա բաժնի) փոխառութեան բաժնեգրութեամբ լրացուցիչ միջոցներ տանք «Յերկրորդ Բազմի» նախագիծին վիչկաների, Կուլթիշիվի հսկայական հիգրոհանդույցի, 20 նոր հրահալոցների, հարյուրավոր շախտերի, հազարավոր նոր արդյունաբերական ձեռնարկութեանների, 1500 նոր ՄՏԿ-ի շինարարութեան համար:

Յերրորդ Հնդամյակի (յերկրորդ տարվա բաժնի) փոխառութեան միահամուռ բաժնեգրութեամբ ել ալելի ամրացնենք բոլոր կոլտնտեսականների համար յերջանիկ, ուետր կյանք ազահովորդ կոլտնտեսային կարգը:

Բանվորներ և բանվորուհիներ, ինժեներա-տեխնիկական աշխատողներ և ծառայողներ, բաժնեգրվեցե՛ք Յերրորդ Հնդամյակի (յերկրորդ տարվա բաժնի) փոխառութեանը: Սմբացրե՛ք մեր սքանչելի, ծաղկող հայրենիքի հզորութեանը:

Յերրորդ Հնդամյակի (յերկրորդ տարվա բաժնի) միահամուռ բաժնեգրութեամբ արագացնենք սոցիալիստական տնտեսութեան հետագա ծաղկումը, ԽՍՀՄ-ի ժողովուրդների դիտութեան, արվեստի ու կուլտուրայի ծաղկումը:

«Կարմիր Բանակի և Ռազմա-Մովային նախատորմի մշտական, իսկական մարտական պատրաստ վիճակումը լինելը միայն կարող է հուսալի յերաշխիք ծառայել խորհրդային պետութեան դեմ ուղղված ամեն տեսակ ռազմական ավանտյուրիաների նկատմամբ» (ՎՈՐՈՇԻԼՈՎ)

Յերրորդ Հնդամյակի (յերկրորդ տարվա բաժնի) փոխառութեան բաժնեգրութեամբ ել ալելի ամրացնենք Կարմիր Բանակի և Ռազմա-Մովային նախատորմի հզորութեանը:

Յերրորդ Հնդամյա պլանի մեծ խնդիրների կատարումը սերտորեն կապված է բանվորների, դյուզացիների և խորհրդային ինտելիգենցիայի ամենակենսական շահերի հետ:



Նոր միջոցներ տանք սոցիալիստական պետու-  
թյանը՝ ստալինյան Յերրորդ Հնդամյակի պլանի կա-  
տարման համար: Բոլորս ինչպես մեկ մարդ, բաժ-  
նեզրվենք Յերրորդ Հնդամյակի (յերկրորդ տարվա  
բաժնի) փոխառությանը:

Յերրորդ Հնդամյակը պիտի ազահովի անհրա-  
ժեշտ ապրանքների, մթերքների, բնակարանների աս-  
պարիզում, բնակչության կենցաղային ու կուլտուրա-  
կան սպասարկման գործում աշխատավորների կարիք-  
ների ու պահանջների ե՛լ ավելի բարձր բավարարումը  
(ՀամԿ(Բ)Կ 18-րդ համադրումարի բանաձևերից):

Յերրորդ Հնդամյակի (յերկրորդ տարվա բաժնի)  
փոխառության միահամուռ բաժնեզրույթյամբ լրա-  
ցուցիչ միջոցներ տանք սոցիալիստական պետությա-  
նը՝ ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգաց-  
ման յերրորդ հնդամյա պլանի կատարման համար:

Մեր ուժը նրանումն է, վոր մենք սոցիալիստա-  
կան տնտեսությունը կառուցեցինք սեփական միջոց-  
ներով, առանց զբաի ստրակացուցիչ վարկերի և փո-  
խառությունների:

Նոր միջոցներ տանք սոցիալիստական պետու-  
թյանը, բաժնեզրվենք Յերրորդ Հնդամյակի (յերկ-  
րորդ տարվա բաժնի) փոխառությանը:

Փարբիկաների և գործարանների, տրանսպորտի  
և սոցիալիստական դաշտերի ստախանովականնե՛ր և  
ստախանովուհիներ, յեղե՛ք Յերրորդ Հնդամյակի

(յերկրորդ տարվա բաժնի) փոխառության բաժա-  
նորդները առաջին շարքերում:

Կոմյերիտականնե՛ր, Խորհրդային Միության յե-  
րիտասարդություն, յեղե՛ք Յերրորդ Հնդամյակի  
(յերկրորդ տարվա բաժնի) փոխառության բաժնե-  
զրույթյան ակտիվ կազմակերպողներ:





---

Թարգմ. և սրբագրիչ՝ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ  
Պատ. իմր.՝ Ա. ԿԱՍՊԱՐՅԱՆ

Գլավղևիտի լիազոր Վ.—1804 Պատ. № 525 Տիրած 5000

---

Հայկ. ԽԱՀ ԺԿԽ-ի հրատարակչությունն ըս. Հ. շ-ի տպարան, Յերևան